



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7  
Հեռ. 50 20 20, 59 46 01

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային  
(տարածքային) տեսչությունների պետերին

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.12.2001թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում բանկային հաշիվներ բացելիս ստորագրությունների նմուշների քարտերը հարկային մարմիններին հաշվառման ներկայացնելու վերաբերյալ» թիվ 319 որոշմամբ հաստատված կարգի կիրառման հետ կապված

Հ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր ՈՒ Մ Ե Մ

1. Բանկում բանկային հաշիվներ բացելիս պահանջվող ստորագրությունների նմուշների քարտերը (այսուհետ՝ քարտեր) վավերացնել հարկ վճարողների կողմից հարկային (տարածքային) տեսչություն դրանց ներկայացման օրը:
2. Քարտերի վավերացման համար հարկ վճարողներից դիմում չպահանջել:
3. Ապահովել քարտերում առկա, սակայն հարկային մարմնի տեղեկատվական բազայում չներառված տեղեկությունների մուտքագրումը:

Գ. Խաչատրյան